ՆՈՐ-ԴԱՐ

№ 17 ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ Ուրբաթ, 31 Յունուարի 1892 Ուրբաթ, 31 Յունուարի ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 17

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., հատով՝ 5 կոպէկ։ Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9 ի մինչև 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառն 2 կ., ռեկլամների համար կրկնապատիկ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՆՈՐ-ԴԱՐ

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԸ
Թիֆլիսում
ՆԵՐԿԱՅ 1892 ԹՈՒԱԿԱՆԻՆ
(Իններորդ տարի)

Հրատարակւում է նոյն ծրագրով և ծաւալով ամեն օր՝ բացի կիրակի, երկուշաբթի և տօներին հետևող օրերից։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՍՏԱՆՈՒՄ Է ԻՒՐ ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուանը՝ 6 րուբլի, հատով 5 կոպ.

ԵՒՐՈՊԱՅԻ, ԹՈՒՐՔԻԱՅԻ, ԱՄԵՐԻԿԱՅԻ, և այլ հեռաւոր երկիրների բաժանորդները վճարում են տարեկան 40 ֆրանկ։

Բաժանորդ են գրւում իւրաքանչիւր ամսի 1-ից միայն։

ԹԻՖԼԻՍՈՒՄ բաժանորդ են գրւում միմիայն «ՆՈՐ-ԴԱՐ»-ի խմբագրատանը։

Խմբագրատունը գտնւում է Պուշկինսկայա փողոցում. Սկուերի դիմաց, Տէր Ասատուրեանի տանը № 11., մուտքը բակից։

Օտար քաղաքներից դիմում են խմբագրութեան՝ Тифлисъ въ Редакцію ежедневной газеты «НОРЪ-ДАРЪ» կամ Tiflis (Caucase) Rédaction du journal «Nor-Dar».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրոնիկոն.—Սուլթանի ներումը Խորէն եպիսկոպոս Նար-Բէյին։ Կովկասի նահանգապետները Թիֆլիսում։ Ժողովրդական դասախօսութիւններ։ Տրանսպորտային ընկերութիւն Պարսկաստանում։ Ափիոնի տնկարաններ Կովկասում։ Գորից։ Գանձակից։ Քարհատ գիւղից։ Կուսապատ գիւղից։

Թղթակցութիւններ.—Ասխաբադ։

Քաղաքական.—Թիւրքիա։ Պարսկաստան։

Խառն լուրեր։

Հեռագրեր։

Յայտարարութիւններ։

ՔՐՈՆԻԿՈՆ

«Le moniteur oriental» լրագիրը հաղորդում է, որ սուլթանը ներում է շնորհել գերապատիւ Խորէն եպիսկոպոս Նար-բէյին։ Ներկայումս,—ասում է յիշեալ լրագիրը,—արդէն յայտնի է, որ Խորէն եպիսկոպոս Նար-բէյը, Բէշիքթաշի եկեղեցու քարոզիչը, այս օրերս պատասխանատուութեան էր ենթարկուած և բացատրութիւններ էր տալիս իշխանութեանը։ Ոստիկանութեան միջոցով մինիստրի մօտ կոչուած լինելով, հայոց պատրիարքի կողմից ուղարկուած հինգ համազգէների ներկայութեամբ նա բոլորովին խոստովանեց իւր յանցանքը»։

Խորէն Նար բէյի յանցաւոր լինելու մասին առաջադրութիւն էր արուած սուլթանին։ Բայց նորին մեծութիւնը ներեց եպիսկոպոսին։

Վերոյիշեալ լրագրի յօդուածը վերջանում է Խորէն Նար-բէյի մի նամակով, որի մէջ ներումն ստացած եպիսկոպոսը խոստովանում է իւր յանցանքը այն հաւատարմութեան դէմ, որ պարտաւոր է ունենալ դէպի նորին մեծութիւն սուլթանը, օրհնում է վերջինս մեծահոգութիւնը և իւր շնորհակալութիւնն է յայտնում ոստիկանութեան մինիստր Նազիմ բէյին իւրեն ցոյց տուած սիրելութեան և կարեկցութեան համար։

Առայժմ յայտնի չէ թէ ինչ է Խորէն Նար բէյի յանցանքը, բայց, ինչպէս լսւում է, նա Պարիզի լրագիրներին սուլթանի մասնաւոր կեանքի մասին թղթակցութիւններ է գրել, մինչդեռ սուլթանն առանձին սէր էր տածում դէպի նա։

—

Թիֆլիսումն են արդէն Կովկասի բոլոր նահանգապետները, որոնք երէկ, յունուարի 30-ին, խորհրդակցութիւն ունեցան մի քանի վարչական գործերի մասին։

—

Կովկասեան Կայսերական գիւղատնտեսական ընկերութեան մի քանի անդամներ մտադիր են գիւղատնտեսական զանազան ճիւղերի մասին ժողովրդական դասախօսութիւններ կարդալ։ Առաջին անգամ դասախօսութիւնները նշանակուած են կիրակի, փետրուարի 2-ին. կը կարդան Ն. Ն. Շաւրովը և Ն. Գ. Տարասենկովը, առաջինը թռչնապահութեան, իսկ երկրորդը բամբակագործութեան մասին։ Հետևեալ դասախօսութիւնները լինելու են միւս կիրակի, փետրուարի 9-ին։

—

Պարսից կառավարութիւնը, մայրաքաղաքի թերթերի ասելով, մի խումբ ռուս դրամատէրերի պայմանագիր է տուել Պարսկաստանի հիւսիսային մասում տրանսպորտային ընկերութիւն հիմնելու։

—

Մայրաքաղաքի թերթերի ասելով, պետական կալուածների մինիստրութեան երկրագործական և գիւղատնտեսական դեպարտամենտը մտադիր է այս տարի փորձեր անել Կովկասում ափիոնի տնկարաններ շինելու։

—

ԳՈՐԻՑ.—Վերջին օրերս ժամանակաւոր զինուորական դատարանը Գորիսում քննում էր երեք վրացի աւազակների՝ Սանդրօ Խուբուլուրի, Ալէքսի Խասիշուլիի և Տասօ Ջիաշուլիի գործը, որոնք երկար ժամանակ բանտարկուած լինելով, մեղադրւում էին մարդասպանութիւնների և աւազակութիւնների համար։ Բազմաթիւ մարդիկ վկայ էին կոչուած։ Ամբողջ քաղաքը խօսում էր և խօսում է այդ գործի մասին։ Քննութեան ժամանակ դատարանի դուռն և պատշգամբը ասեղ գցելու տեղ չկար։ Յունուարի 29-ին դատարանը հետևեալ վճիռը կայացրեց, յիշեալ երեք աւազակներին զրկել կարողութեան բոլոր իրաւունքներից և կախաղանով մահուան պատժի տալ։ Այս դատավճիռը պէտք է ներկայացնել Կովկասի գլ. Կառավարչապետի հաստատութեան։

—

ԳԱՆՁԱԿԻՑ.—Այստեղ կատարուեցան կաթողիկոսական հաւատարմատարների ընտրութիւնները։ Քաղաքիս հայ ժողովրդից ընտրուած են 13 հաւատարմատար (հարիւր ծուխը մի հոգի). վիճակիս 23 գիւղերից էլ մի-մի հաւատարմատար կընտրուեն, որոնք միասին կընտրեն երկու երեսփոխան Թիֆլիսի պատգամաւորի ընտրութեանը մասնակցելու համար։

—Ուսուցչական խումբը պատրաստւում է խաղալ Մուրացանի «Ռուզան» դրաման։

—

ՔԱՐՀԱՏ գիւղից (Գանձակի գաւ.) Մեզ մօտ սպանութեան դէպքեր յաճախ են պատահում։ Անցեալ օրը մի գիւղացի երիտասարդ՝ իբր անզգուշութեամբ՝ տուեց սպանեց գիւղիս քահանայի որդուն։ Նոյն գիւղից երկու շաբաթ առաջ էլի անզգուշութեամբ սպանեց նոյն քահանայի եղբօր որդուն։ Ժողովրդի բարոյականն օր օրի վրայ ընկնում է. գինին և օղին փչացնում են ժողովրդին։ Թէ մեր և թէ շրջակայ գիւղերում շահամոլ մարդիկ պահում են գաղտնի գինետներ։

—Ներսէս Տէր-Ներսէսեանցի կտակած հանքը որ մեր գիւղի հանդումն է գտնւում, վերջերս աւելի և աւելի գոհացուցիչ նշաններ է տալիս։ Գիտակ անձերի ասելով մեծ ապագայ է խոստանում այս հանքը։ Ինչքա՜ն այսպիսի գանձեր կան թաղնուած մեր սարերում, որ մեր տգիտութեան երեսից անցնում են հեռաւոր օտարների ձեռքը։

—

ԿՈՒՍԱՊԱՏ գիւղից.—Մեր գիւղում կայ արքունական տարրական կեդրոնական ուսումնարան, որի աշակերտներն ամէնքն էլ հայեր են։ Վերջերս այդ աշակերտներից նոյն ուսումնարանի ուսուցիչ պ. Յովհաննէս Ապոյեանը կազմել է մի երգեցիկ խումբ՝ 25 հոգուց բաղկացած, որ կիրակի և տօն օրերին երգում է եկեղեցում ի մեծ մխիթարութիւն գիւղական ժողովրդի։ Երանի թէ այս օրինակին հետևէին միւս գիւղերի հայոց ուսումնարանները, որոնց ոչ-երկրորդական նպատակը պիտի լինի, կարծում ենք, երգեցողներ տալ գիւղական անշուք և լքեալ եկեղեցիներին։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՍԽԱԲԱԴ, 20 յունուարի.—Անցեալ 1891 թուին, փետրուար, մարտ և ապրիլ ամիսներում Անդրկասպեան երկրի գլ. կառավարիչը հայ հասարակութիւնից պահանջում էր հայոց եկեղեցուն յատկացրած գետնի համար դոկումենտները զանազան պատճառանքներով։ Կառավարութիւնը ասում էր, որ հայերին եկեղեցի կառուցանելու համար է միայն տեղ տուած, իսկ ուրիշ ազգային հիմնարկութիւնների համար ոչ։ Յիշեալ գետնի հարցը և դոկումենտի պահանջմունքը շարունակ մի քանիս անգամ կրկնուեց։ Կառավարչի ստիպողական պահանջմունքը շատ արդարացի էր։

Մեր հոգաբարձուները, պատուաւոր անձերն, երեսփոխն և քահանաներն, անհանգիստ դրութեան մէջ էին։ Ոմանք ասում էին թէ, վարչութեան կողմից եկեղեցու գետնի համար դեռ ևս դոկումենտ չէ տուած, ինչպէս նա և չէ տրուած տուն ունեցող մասնաւոր անձերի, այլ միայն տեղիս գաւառական գլխաւորը գրում է տների ցանկը համարներով, տան տիրոջ անունը ազգանունը, որոնց համեմատ էլ առանձին մասնաժողովի կարգադրութեամբ տանտէրերին դոկումենտներ պիտի տրուին։

Բայց նախկին երեսփոխներից մէկը պնդում էր, թէ 1886 թուին մեր եկեղեցու գետնի համար կառավարութիւնը տուել է դոկումենտ, բայց չէ իմանում, թէ որտեղ է այդ դոկումենտը։

Այս մասին երկար խօսում, վիճում և գրում էին, առանց նպատակին հասնելու, առանց մտածելու որ իրենց վրայ մեծ պարտք կայ, և իրենք էլ պատասխանատու են թէ ազգի, թէ հոգևոր իշխանութեան և թէ նոյն իսկ իրենց տեղական հասարակութեան առաջ։ Դոկումենտն անհրաժեշտ էր, փնտրում էին՝ չկար։ Վերջապէս, ես ինքս երկար չարչարանքներից յետոյ գտայ այդ դոկումենտը. իսկոյն արտագրեցի իսկականի պատճէնը և յանձնեցի ներկայ երեսփոխ պ. Նիկ. Տէր-Մկրտչեանին, ասելով նրան թէ իսկական դոկումենտը ուղարկեցի Շամախու հայոց կոնսիստորիան, բայց իսկապէս իսկականը պահեցի ինձ մօտ։ Այդ միջոցին անցել էր բաւական ժամանակ, երբ կրկին, կառավարութեան կողմից հարց բարձրացաւ և պահանջւեցին հայերից մի քանի մարդիկ, որի համար էլ նշանակել էր առանձին Մասնաժողով։ Այդ Մասնաժողովը պիտի քննէր և քննեց հայոց եկեղեցու գետնի հարցը. դոկումենտը և այլ ազգային հիմնարկութիւնների գործերը։

Մասնաժողովին ներկայ էին հայերից նախկին գործակալ քահանայն (որը ներկայումս քննութեան տակ է) հոգաբարձուները, երեսփոխը, երկու երեք կոչմնակի պատուաւոր անձեր և ես։

Մասնաժողովի նախագահը մի քանի խոշոր հարցեր տալուց յետոյ, պահանջում էր հայերի կողմից ուղիղ և արդարացի պատասխաններ, նաև դոկումենտը։ Մենք ամէնքս պարզ և ուղիղ պատասխան տուինք, իսկ դոկումենտի պատճէնը, որը հաստատուած չէր, երեսփոխ պ. Տէր-Մկրտչեանը ներկայացրեց Մասնաժողովի նախագահին։ Նախագահը, կարդալով դոկումենտի պատճէնը, տեսաւ, որ դրա մէջ ասուած է, թէ, բացի եկեղեցուց, նաև տեղական հայերը կարող են ունենալ ուսումնարան և այլ ազգային հիմնարկութիւններ. բացի կրպակներից, և դոկումենտը, տրուած է գլխաւոր շտաբի կողմից՝ Անդրկասպեան երկրի նախկին կառավարչի հրամանով. բայց որովհետև իսկականը չկար և պատճէնն էլ վաւերացրած չէր, պ. նախագահը ցաւակցութիւն յայտնեց, և մի քանի խնդիրների և հարցերի մասին տեղեկութիւն ստանալուց յետոյ, յայտնեց, որ կարող ենք գնալ, իսկ եթէ, ուրիշ անգամ հարկաւոր լինի, ինքը մեզ իմաց կտայ և կը կանչէ։

Նոյն տարուայ մայիս ամսին ես իմ անձնական գործերով հեռացայ Ասխաբադից և հանդիպեցի Շամախի, տանելով եկեղեցու կալուածների իսկական դոկումենտը։

Սոյն նամակս գրելուս պատճառ տուեց այն հանգամանքը, որ կան մարդիկ, որոնք ինչ ինչ դիտումներ ունենալով հարցնում են, թէ-ինչ իրաւունքով գտած դոկումենտն ես յանձնել եմ կոնսիստորիային։ Սրանով եղելութիւնը պարզելով, ես կամեցայ նոյնպէս մի անգամ ընդ միշտ հասկացնել, որ մեր ազգային կալուածների դոկումենտներն անպատճառ ապահով տեղ պէտք է լինին, իսկ այդ ապահով տեղը մեր հոգևոր ատեաններն են։

Գ. Մ. Սիմէօնեանց

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹԻՒՐՔԻԱ.—«Neue Freie Presse» լրագրի ասելով, սուլթանին աջողուել է իւր զօրքերի թիւը հասցնել մօտ մի միլիոն հոգու, որոնցից հարկաւոր դէպքում կարող են մօտ 700,000 հոգի պատրաստ լինել։ Զօրքերի համար զէնքերը բերւում են բացառապէս արտասահմանից։ Թուրքաց ամբողջ զօրքն ունի հազար թնդանօթ։

Ամենանշանաւոր խնդիրը, որ կարօտ է թուրքաց զինուորական իշխանութեան վճռին, դա հետևակ զօրքի զինման խնդիրն է։ Թուրքաց զօրքն այժմ զինուած է զանազան սիստեմի հրացաններով։ Այդ հրացաններից 500,000-ը Մարտինի-Հենրիի հին սիստեմի է, 220,000-ը Մաուզէրի և Լեօվէի գերմանական գործարանին պատուէր է տուած Մանլիխերի 280,000 հրացան պատրաստելու։ Որովհետև այդ զանազան սիստեմի հրացանները կարող են վատ հետևանքներ ունենալ, վճռուած է Մարտինի-Հենրիի հին սիստեմի հրացանները Մանլիխերի նոր սիստեմի հրացանների վերածել։ Մաուզէրի հրացանները կը բաժանուեն բաշիբոզուկներին և նոյնանման ցեղերից կազմակերպուած զօրքերին։

—Անգլիական լրագիրները հետևեալ տեղեկութիւններն են հաղորդում Եմենի ապստամբութեան մասին, որոնք մասամբ լրացնում են «Кав»-ի Բէյրութի թղթակցի այս օրերս մեր առաջ բերած հաղորդածները։

Ապստամբութիւնն Եմենում այնքան էլ չի ճնշուած։ Նոր-պարագլուխները նորից յուզում են յարուցանում, մինչ դեռ թուրքաց զինուորական ուժերն անբաւական են ապստամբներին դիմադրելու համար։ Ներկայումս Եմենում թուրքաց 36 գունդ կայ, որոնք հաւաքուած են Թիւրքիայի զանազան կողմերից, այդքան զօրքից պիտանի է միայն մի երրորդ մասը, մնացածը վատ է զինուած և ենթարկուած է հիւանդութիւններին։ Ապստամբներին այս բոլորը լաւ յայտնի է, և այդ պատճառով նրանք նորից զէնք են ձեռք առնում։ Թուրքաց զօրքերին ամէն կողմից յարձակւում է սպառնում, և եթէ նրանց շուտափոյթ օգնութիւն չհասցնեն, նրանց դրութիւնը խիստ կրիտիքական կը լինի։

Բ. Դուռը խիստ մտահոգ է այդ հանգամանքից։ Զինուորական մինիստրին հրամայուած է յամենայն դէպս պատրաստ լինել, նմեն ուղարկել այնքան զօրք, որքան կարելի է հաւաքել, նոյնպէս և ռազմամթերքներ ուղարկել։

ՖՐԱՆՍԻԱ. — Արքայականները եռանդուն աժիտացիա են անում, նպատակ ունենալով յուզելու եկեղեցու խնդիրը և հոգևորականութեան ու հասարակապետական կուսակցութեան միջև յարաբերութիւններին սուր բնաւորութիւն տալ։ Այս օրերս Նիմում մի բազմամարդ ժողով կայացաւ, որտեղ արքայական կուսակցութեան յայտնի գործիչ Լաշարուէլը ճառ խօսեց եկեղեցու և պետութեան միջև եղած յարաբերութիւնների և այն դրութեան մասին, որ նրա կարծիքով պէտք է ունենայ արքայական կուսակցութիւնը։ «Շատ ժամանակ չէ,—ասաց ճառախօսը,—պնդում էին, թէ պէտք է դադարեցնել կռիւը, որովհետև մենք յաղթուած ենք և յաղթողները պէտք է հնազանդուեն»։ Այդպիսի հայեացքը Լաշարուէլը սխալ է համարում, և արքայականների պարտաւորութիւնների վրայ ամենից լաւ կերպով, ինչպէս կարծում է ճառախօսը, մատնանիշ է անում կարդինալների յայտագիրը,— «յայտագիր,—շարունակում է ճառախօսը,—որ համոզում է մեզ կռուել անդադար և շարունակ այնքան, մինչև որ բաւարարութիւն տրուի կաթոլիկների պահանջներին։ Ճառախօսն այնուհետև աշխատում համոզել ժողովին, որ ոչ պապը, ոչ Ռամբոլլա կարդինալը խորհուրդ չեն տուել կաթոլիկներին հրաժարուել իրենց միապետական համոզմունքներից և իրենց յոյսերից։

«Մեզ առաջարկում են, սակայն, ընդունել այժմեան հաստատութիւնները։ Այդ բառը գրուած է կարդինալների յայտագրի մէջ։ Այսպիսի մեծ նշանակութիւն ունեցող դոկումենտի մէջ իւրաքանչիւր բառ պէտք է կշռադատուած լինի։ Ինձ յայտնի է, որ սկզբում ուրիշ բառ էր առաջարկուած. ընդունել» բառի տեղ գրուած էր «յարգել», բայց այդ բառը շուտով ջնջեցին։ Դուք, ի հարկէ կը հասկանաք, թէ ինչ ահագին զանազանութիւն կայ այդ երկու բառերի միջև։ Ոչինչ մեզ արգելք չէ լինում ընդունելու ներկայ սահմանադրութիւնը, կարծելով, որ ժողովուրդն ըստ իւր ցանկութեան կարող է փոխել կառավարութեան եղանակը։ Այս բանին պատասխանում են, թէ սահմանադրութեան յօդուածներից մէկի համաձայն հասարակապետական կառավարութեան եղանակը կարող չէ վերաքննութեան առաջարկութեան առարկայ լինել։ Այս երեխայական պատասխան է, որովհետև կոնգրեսը բարձրագոյն իշխանութիւն ունի և ուստի այդ յօդուածը կարող է փոխել և միապետութիւն քուէարկել։ Մեզանից միայն մի բան են պահանջում—յեղափոխական չլինել. մենք երբէք յեղափոխական չենք եղել, և նրանք, որոնք մեղադրում են մեզ, թէ յեղափոխական ձգտումներ ունենք, իրենք իշխանութիւն են ձեռք բերել միշտ յուզումներ յարուցանելու շնորհիւ։ 12 տարուայ ընթացքում կռիւը առաջ է մղւում կաթոլիկութեան ասպարէզի վրայ։ Այժմ իշխանութիւնը փրանկ մասոնութեանն է, որ տիրապետում է երկրում և իւր օրէնքներն մեզ թելադրում։ Մենք միշտ մեր բոլոր ուժով կը կռուենք հասարակապետական կառավարութեան դէմ, որ ինչպէս կարդինալներն են ասում իրենց յայտագրի մէջ, միշտ կաթոլիկական հաւատին թշնամի վարդապետութիւնների մարմնացնում է եղել։ Մի քանի պահպանողականներ հասարակապետութիւն ընդունում են այնպէս ինչպէս որ կայ. մենք ժամանակ չենք կորցնիլ որպէս զի մեր զայրոյթն արտայայտենք նրանց. նրանք արժանի չեն այն բանին, որ նրանցով զբաղուենք. նրանք թշնամու կողմն են անցել։ Միւս պահպանողականները յարել են հասարակապետական կառավարութեան եղանակին, բայց եռանդով դիմադրում են արտաքոյ կարգի օրէնքներին. սրտով հաւատում են, որ այդպէս վարուելով իրենք մեծ ուժով կը կռուեն նրանց դէմ, որոնց ձեռքին է իշխանութիւնը։ Նրանց հետ մենք վիճաբանութեան մէջ չենք մտնիլ և ձեռք ձեռքի տուած կը կռուենք կաթոլիկ հաւատի համար»։ Ի վերջոյ ճառախօսն հետևեալ կերպով է ձևակերպում իւր հայեացքները. «քահանայի դրութիւնը ոչ թէ միայն եկեղեցումն է, այլ ամեն տեղ։ Թող հոգևորականութիւնը աւելի սերտ և սերտ կերպով միանայ ժողովրդի հետ. ամեն տեղ, ուր հոգևորականութիւնն այսպէս է վարուել, յաղթութիւնը միշտ նրա կողմն է մնացել։ Այս գեղեցիկ առաքելութիւնը կատարելու համար առաջնորդութեան մարդ ցոյց տանք մեզ. կը յարգենք անցեալը, բայց բարձրաձայն կը գոչենք, որ անցեալին չի կարելի վերադառնալ և մենք վճռապէս առաջ կ՚ընթանանք։ Այո, մեզ անհրաժեշտ է ռամկավարութեան գլուխ անցնել։ Այս բառը կարող է վախեցնել մի քանի պահպանողականների։ Ինչո՞ւ։ Եթէ դուք մերժում էք ռամկավարութիւնը, պէտք է դրա տեղ արիստոկրատիան ընդունէք. բայց ծագումով արիստոկրատիան, որ պատմութեան մէջ մեծ ծառայութիւններ է մատուցել հայրենիքին, այժմ չի կարող երկիրը կառավարել։ Մնում է փողի արիստոկրատիան։ Ես վճռապէս մերժում եմ դրան։ Աւելի լաւ է ժողովրդի կառավարութեան տակ գտնուել, քան թէ բանկիրների։ Ասենք այս ժողովրդին. նա մեր կողմը կանցնի և մենք կը յաղթենք»։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Врачъ» լրագիրը մի զարմանալի դէպք է պատմում մի շան կեանքից։ Կառապանը իւր տէրերի հրամանը կատարելով կատուի ձագը տանում է գետում խեղդելու։ Հազիւ ջրի մէջ է ձգած լինում, երբ նրա մօտ եղած շունիկը իսկոյն ջուրն է ընկնում և ազատում խեղդուող կատուին. կառապանը երկրորդ անգամ ջուրն է ձգում, շունը կրկին ջուրն է ընկնում և ազատում։ Կառապանը չարանում և որոշում անպատճառ խեղդել կատուին, երրորդ անգամ ջուրն ձգում։ Շունը նրա յետևից թռաւ ջուրը, բռնեց իւր ատամներով և այս անգամ արդէն գետի հակառակ ափը գնաց, սլացաւ դէպի տուն և կատուին տեղաւորեց խոհանոցի վառարանի դիմաց, յատակի վրայ։ Այն օրից սկսած այդ երկու կենդանիները անբաժան են միասին ուտում են միևնոյն ամանից միասին քնում են և այլն։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՎԻԵՆՆԱ, 29 յունուարի.—Պրագայում երէկ անգործ մնացած աւելի քան 400 բանուոր հաւաքուեց. նրանք մի պատգամաւորութիւն ուղարկեցին բուրգոմիստրի մօտ խնդրելով, որ իրենց գործ տան, սոված են։

Դանուբի շոգենաւային ընկերութեան պաշտպանները ատեանում ապացուցում էին, որ թէև այդ ընկերութեան մէջ շատ բաներ ի չարն են գործ դրուել, այնուամենայնիւ նրան պէտք է թոյլ տալ նրա համար, որ ներքին Դանուբի վրայ նաւագնացութիւնը բացառապէս ռուսաց ձեռքին չմնայ։

ՄԱԴՐԻԴ.—Այսօր մահուան պատժի կ՚ենթարկուեն խերեսցի անարխիստները։

Ամբողջ Սպանիայում բանուորների մէջ խիստ յուզում է տիրում. մանաւանդ մեծ յուզում է տիրում Բարսելոնում, որտեղ մի քանի մարդ է ձերբակալուած։ Երէկ Բարսելոնում փողոցի մէջ մի ռումբ է պայթեցրած, որից մի հոգի սպանուած է և երեքը վիրաւորուած։

ԼՈՆԴՈՆ. — Մարկիզ Սալսբիւրին պատգամաւորների ժողովում ասաց, թէ կառավարութիւնն երբէք թոյլ չի տալ, որ Եգիպտոսում ոչ ուրիշ մի որ և է պետութիւն գերիշխող դեր կատարէ և ոչ անկարգութիւններ ու անիշխանութիւն առաջանան։

ԲԵՐԼԻՆ.— Գերմանական կայսրուհին թեթև հիւանդացել է ինֆլուէնցայով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 յունուարի.—Մեծ Իշխան Ալէքսէյ Ալէքսանդրովիչը նշանակուած է նաւատորմղի 5-րդ բաժնի շեֆ։

Ֆինանսների մինիստրութիւնը Միացեալ-Նահանգների կառավարութեան յայտարարում է երբև էկսպերտ, և գներ որոշող Ամերիկա ներմուծուող ռուսական ապրանքների որոնց համար մաքս պէտք է վճարուի ոսկով։

Արևմտեան Սիբիրում մի քանի պետական կալուածների կառավարութիւններ մտցնելու խնդիրը քննւում է։

Խմբագիր—հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ Ֆրանսերէնից
հայերէն թարգմանուած
ԺՈՐԺ ՕՆԷԻ
„ԴՕԿՏՕՐ ՌԱՄՕ"
հեղինակութիւնը, մեծադիր 375 էջ,
գինը 80 կ.

Թիֆլիսում վաճառւում է «Կեդրոնական գրավաճառանոցում. Բաքուում եղբ. Բեգլարեանցների մագազինում. Շուշու. Աբ Աճամեանի գրավաճառանոցում և Գափեանի մագազինում։ Ուրիշ քաղաքներից դիմել թարգմանողին՝ шушу, Никитѣ Хандамирову.

գինը 1 րուբլի
(255) 10—6.

ԿՈՇԿՈՃԻ
ԴԵՂ
Ա. ՑԻՓԼԵՐ.

½ կտորը 30 կ.
1 կտորը 50կ.

կարելի է ստանալ բոլոր անւանաւոր դեղատներում. դեղատնային և պարֆիւմերային խանութներում

(100 ա.) 15—13.

ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՆԿԻ ԹԱՏՐՈՆ

Երկուշաբթի, փետրուարի 3 ին հայ դերասանական մշտական խումբը կը ներկայացնէ

Ի ՆՊԱՍՏ
Օր. Վարդուհու և պ. Աբրահամեանի

I
ՍԱՆԴՈՒԽՏ ԿՈՅՍ

Ողբերգութիւն 6 պատկերով, հեղ. Թերեզանի

Պատկեր Ա.
Ասպետական պալատում քրիստոնէական արշալոյսը.
Պատկեր Բ.
Հայր և աղջիկ.
Պատկեր Գ.
Թագ և մահ.
Պատկեր Դ.
Լոյս և խաւար.
Յաղթական մարշ.
Պատկեր Ե.
Բանտ. Սէր և հաւատ.
Պատկեր Զ.
Նաւարշանայ դաշտը. առաջին նահատակուհին

Կը մասնակցեն՝ տ. Սիրանոյշ, պ. պ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ, Պետրոսեան, Աբէլեան, Պարոն-Սարգսեան, Արմէնեան, Յարութիւնեան։

Պալատական ասպետներ, տիկնայք, զօրապետներ, զօրք, ժողովուրդ, մոգեր, դահիճներ և այլն։

II
ԿՌՈՒԱՊԱՇՏԱՐԸ ԵՍ ԷԻ
Վոդևիլ 1 արարուածով։
Կը մասնակցեն՝ օր ՎԱՐԴՈՒՀԻ, պ. պ. Թաւրեան, Տէր-Դաւթեան.

Սկիզբն է ժամը 7½ ին։

(274) 2—1

VÉRITABLE BÉNÉDICTINE
ԻՍԿԱԿԱՆ ԲԵՆԵԴԻԿՏԵՆ ԼԻԿԵՕՐ
Գերազանց, կազդուրիչ, մարսողութեանը օգնող և ախորժակ զարթեցնող
ԲՈԼՈՐ ԼԻԿԵՕՐՆԵՐԻՑ ԱՄԵՆԱԼԱՒԸ.

VÉRITABLE LIQUEUR BÉNÉDICTINE
Marques déposées en France et à l'Étranger
A. Legrand aîné

Ամեն անգամ պահանջել քառանկիւնի թղթանիշը շշի ներքևում դնուած տեսչի ստորագրութեամբ։

Վաճառւում է ուտելիքների ամենալաւ մագազիններում և իւրաքանչիւր քաղաքի ամենալաւ [illegible]

14—1



ԺԻՐՕԴԷԼ ՊԱՍՏԻԼՆԵՐ
ՆՈՐՎԷԳԻԱՅԻ ՄԱՔՈՒՐ ՋՐԻՑ ՊԱՏՐԱՍՏԱԾ
ՆԵՐԳՈՐԾՈՒՄ Է ՆԵՐՇՆՉԵԼՈՎ, ԵՒ ԿՈՒԼ ՏԱԼՈՎ.

Գործածւում են այն գեղահամներին և քաղցրեղէններին, որոնք ծանրացնում են ստամոքսը և ներգործութիւն չեն ունենում հիւանդական գործարանների վրայ։

ԺԻՐՕԴԷԼԻ ՊԱՍՏԻԼՆԵՐԸ միակ կուպրային պաստիլներն են, որ պարգև են ստացել 1878 թ. Պարիզի համաշխարհային ցուցահանդէսում միջազգային գնահատիչներից։

ԳՏՆՒՈՒՄ ԵՆ ԲՈԼՈՐ ԴԵՂԱՏՆԵՐՈՒՄ,

Ամեն մի տուփիկում կայ 72 պաստիլ, գործածութեան եղանակի բացատրութիւնով.

ՎԱՃԱՌՒՈՒՄ Է ՄԵՆ ՓԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ,
L. GÉRAUDEL,
Pharmacien à Sainte-Menehould, France.

Պահանջել գործատան ընդունուած կնիքը։

Այդ պաստիլները ծծելիս հանած օդը լցւում է կուպրի գոլորշիներով և օդի հետ գնում է ուղղակի հիւանդ անդամը։ Ներգործութեան այս յատուկ եղանակով, և միևնոյն ժամանակ էլ իրեն բաղադրութիւնով, այդ պաստիլներն օգնում են այն դէպքում, երբ [illegible] են տալիս կուպր գործածելու.

Պահանջել գործարանային ընդունուած կնիքը։

Վաճառւում է Թիֆլիսում [illegible] դեղատնային ապրանքների Կովկասեան ընկերութեան մէջ։

(M.) 12—6

Дозволено цензурою. Тифлисъ 30 го Января 1892 г. Տպարան Կաւկազ լրագրի գրասենեակի Типографія конторы газеты Кавказъ Гол. пр., домъ Читахова